

Կանոնագրութիւնս

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիչ 12



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԻՍ هانراکيداق HANRAKIDAGUE
ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعة علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 12 || 22 ՄԱՐՏ 1903



ՄԱՐՏԻՐՈՍ ԳՕԶՈՒՆԵԱՆ

(ԲԱՍԻՍՈՐԴԻ)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՍՑԵՒՆ

Սիրելի՛ Պարոններ ու Օրիորդներ,

Ուրախ եմ որ Հանրագիտակ այսօր առիթ կուտայ ինձ, անգամ մ'ալ վայելելու ձեր հաճելի ընկերութիւնը որ այնչափ քաղցր է ու հրապուրիչ, անոնց համար մանաւանդ որոնք գիտեն թէ, ընտանիքներու հոգին էք դուք, ամուսիններու միութեան կապն ու ծնողներու սփոփանքը:

Ի՞նչ կ'արժէ տուն մը երբ հոն չեն արձագանգեր ձեր մանկական ճուռողները, հրեշտակային գեղգեղներն ու թոթով մոթով խօսակցութիւնները:

Զատիկը տունէն ներս չի մօներ, երբ դուք կարմիր հաւկիթներու հոյլով մը չողջունէք զայն, ոչ ալ Ծնունդը զգալի կ'ըլլայ ո՛ր եւ է յարկի տակ՝ երբ ձեր հրեշտակային ձայնը աւետիս չօրհնաբանէ հոն: Կաղանդը ձեր ներկայութեամբն է որ կ'աւելցնէ իր փայլը եւ Բարեկենդանը ձեր մանկական խաղերուն կը պարտի իր սփռած զուարճութիւնը: Եկեղեցին ձեր ալելուներովն է որ կը պայծառանայ եւ հաւատացեալները ձեր սրբասացութիւններովն է որ կը հաշտուին Աստուծոյ հետ:

Ամուսնական միութիւնը առանց ձեր գոյութեան՝ ապարդիւն պիտի ըլլար եւ շատ մը ամուսիններ տարիներով գժտուած պիտի մնային, եթէ ձեր հաշտարար միջնորդութիւնը չհասնէր: Միօրինակութեան տաղտուկը իր ամբողջ տիրութեամբ պիտի ծանրանար ընտանիքներուն վրայ, եթէ ձեր աշխոյժ վաղքերն ու ժրպտախառն գգուանքները պէսպիսութիւն չդնէին կեանքին մէջ եւ հոգն ու մտմտութեամբ պիտի տիրապետէին սրտերուն վրայ՝ եթէ ձեր համբոյրները չփարատէին պատահական վիշտերը ձեր ծնողներուն:

Դո՛ւք, սիրելի պարոններ ու օրիորդներ, հրաշքներ կը գործէք ամէն օր եւ խաղաղութիւն, երջանկութիւն, սէր կը սերմանէք հոն՝ ուր որ մտնէք: Յամաք հացն ու շոր լուբիան համադամներով չքացած խորտիկներու կը փոխուին, երբ ձերսրտ առուչ Հայր մերը հնչէ անոնց վրայ եւ անշուք խրճիթը հոյակապ տուններէ աւելի կը պայծառանայ, երբ դուք առտուն կանուխ՝ ձեր դասերը պատրաստելէ առաջ՝ աղօթքի կանգնիք հոն ու Աստուծոյ շնորհք, իմաստութիւն խնդրէք: Ամէնէն ծանր աշխատութիւնները զուարճալի զբօսանքներ կը թուին ընտանեկան բեռին տակ կ'ըստ հօր

համար, երբ դուք իրիկունները լամբարին առջեւ ձեր դասերովը պարապիք, և աղքատութիւնն ու չքաւորութիւնը մոռացութեան տակ կը թաղուին երբ բարենիչներու առատ թիւով մը դպրոցէն վերադառնաք:

Ասոնց ամէնէն աւելի, ո՛վ սիրուն գառնուկներ, դուք նեցուկը՝ կեանքի ապաւենն էք մայրերուն, մանաւանդ իրենց վատարարոյ ամուսիններէն լքուած կամ սիրակցորդ ամուսիններէ այրիացած մայրերուն, որոնք ձեր առթելիք յոյսէն զատ՝ ապրելու համար ո եւ է կուռն շունին աշխարհի մէջ: Դրամ՝ չէ որ կ'սպասեն անոնք ձեզմէ. դպրոցական տարիքին մէջ նիւթական օգնութիւն չսպասուիր տղոցմէ. մինակ՝ պարկեշտ, ուսումնասէր և առաքինի եղէք. հիմակունէ իսկ համոզում գոյացուցէք ձեր մօր սրտին մէջ թէ, ընտանեկան նախանձելի ապագայ մը պատրաստելու տենչով կ'աշխատիք և ասիկա բաւական է ո՛ր եւ ծնողի համար երկար տարիներ համբերելու և սպասելու:

Մի՛ կարծէք որ ամէն բան ընել ներելի է տղայական շրջանի մէջ. ընդհակառակը տղայութիւնը հայելին է չափահասութեան. հիմակունն ձեր այս փոքրիկ տարիքին մէջ, ի՛նչ նկարագիր որ ունիք, անիկա անբաժան պիտի մնայ ձեզմէ մինչեւ խոր ծերութիւն: Եթէ բարի, աշխատասէր, գործունեայ աղաքներ էք, անպատճառ յաջող, ճարպիկ, հարուստ անձնաւորութիւններ պիտի ըլլաք: Կեանքէ յուսահատած թշուառ մարդիկը, որոնց վրայ նողկանքով կը նայիք ձեր դպրոցական երթեւեկի ժամանակ, վստահ եղէք որ անոնք երենց տղայութենէն իսկ պատրաստուած են գեանաքարչ կեանքի մը: Դպրոցին մէջ կը տեսնաք աշակերտներ կամ աշակերտուհիներ՝ որոնք փոխանակ դասով զբաղելու, շարունակ անառակութիւն, խեղկատակութիւն կը նիւթեն. խրատեցէք զանոնք, ուղղութեան հրաւիրեցէ՛ք. թշուառները այս ընթացքով յուս ապագայ մը կը պատրաստեն իրենց և երբ չափահասութեան տարիքը թեւակոխեն, ապահովապէս՝ կամ դատարկապորտ պիտի ըլլան կամ բեռնակիր եւ կամ պարզապէս խեղճ ու կրակ կեանք մը պիտի վարեն:

Դիտեմ, փոքրիկ հրեշտակներս, դուք բարի աղաքներ էք և սիրով մտիկ կ'ընէք մեծերու, փորձառուներու կողմէ ձեզ տրուած խրատներուն: Տղայութիւնը արդէն երկարատեւ շրջան մը չունի, քանի մը տարիէն կ'աւարտէք դպրոցական ընթացքը եւ կը մտնէք գործի ասպարէզը. այն ատեն երբ լաւ տղայութիւն մը անցուցած էք, երբ քաջապէս ողբած էք մաքուր գիր գրել, լաւ գրութեամբ մը խմբագրել, հաշիւ ընել, երբ հմտութիւն ձեռք բերած էք օտար լեզուներու և ուսումներու եւ երբ մանաւանդ ուղղա-

միտ, պարկեշտ, աշխատասէր ու գործունեակ էք, վատաշ եղիք որ նախանձելի կեանք մը պիտի վարէք ու երջանիկ ծերութիւն մը վայելել պիտի տաք ձեր ծնողներուն,

Այս կէտը նկատողութեան առէ՛ք, Պարոններ՝ ու Օրիորդներ, Ձեր ծնողները անո՛ր համար դպրոց դրած են ձեզի, որպէս զի երբ չափահաս ըլլաք փայլուն կեանք մը վարէք ու վայելել տաք նաև իրենց: Ե՞մ հաւանք ունիմ ձեր պարկեշտութեան ու աշխատասիրութեան վրայ, ձեր մեծայարգ ուսուցիչներն ու ուսուցչուհիները բարոյականի մաքուր սերմեր կը ցանեն ձեր մատաղ սրբտերուն մէջ. դուք ալ ջանք մի՛ խնայէք ամէն կողմէ շուայուած խնամքներն ու աշխատութիւնները արդիւնաւորելու: Այն ատեն, ապահով կերպով պիտի ըլլաք օրինակելի պարոններ ու օրիորդներ, ինչ որ սրտանց կը մաղթէ

Ձեր անկեղծ բարեկամը

ՔԱՍԻՄ

Յ. Գ. —Այս առթիւ պատիւ ունիմ Հանրագիտակի միջոցով ձեզ ներկայացնել սիրելի եղբորորդիս՝ Մարտիրոսը, Քասիմօրդին, որուն այս խայտարղէտ սիրուն ձին նուիրեցի վարձատրելու համար իր խելօք ու պարկեշտ ընթացքը: Դուք ալ եթէ խրատներս մտիկ ընէք ու օրինակելի տղաք ըլլաք, այլ եւ այլ նուէրներ պիտի ընդունիք ձեր ծնողներէն ու ազգականներէն: ՆՈՅՆ

1903, Մարտ 18, Կ. Պոլիս.

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԸ

Դիսակի « Մտածութիւնք Տօնական Օրերու Հայ. Սբ. Եկեղեցւոյ » խիստ շահեկան ու օգտաշատ գրքոյկը, որ արժանի է ընթերցման մասնաւորաբար Մեծ Պահքի օրերուն, կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով: Կեդրոնատեղին է Մէրճան, Եալտը խան, Թիւ 10, Առաքել էՖ. Գաբրիէլեանի գրասենեակը: Գին 5 դահեկան: Մէկ անգամէն 5 օրինակ գնողին մէկ հատ նուէր կը տրուի: Հասոյթը կը վերաբերի ողբացեալ հեղինակին այրի տիկնոջ և իր որբերուն: Ո՞վ չպիտի սիրէ հատ մը գնել:



Գ Ա Ր Ն Ա Ն

Ե Ր Գ Ե Ր

(ՊՃԸԼԻԿՆԵՐՈՒ ԲԵՐՆԷՆ)

Ահա՛ բամբոս կ'աւետէ մեզ՝ վարդ զարուն,
Տղեկն ընծայ տանի մօրկան՝ փունջ սիրուն,
Աման ու արեւ, մին միւսին տայ ողջոյն,
Առուակն այցի՛ կ'երթայ ծաղկանց զոյնզոյն:

Տղեկն ընծայ տանի մօրկան՝ կիւնջ սիրուն,
Բամբոսն է՛ ան, կամ մանուշակ մոռչկտուն,
Մին՝ մատղըշուկ, միւսը՝ մանրիկ, հոտաւէտ,
Որքա՛ն սիրեմ զորս հոտոտել ես յաւէտ:

Աման ու արեւ՝ մին միւսին տայ ողջոյն,
Կեա՛նք կը շնչեն մարդ, անասուն ու թռչուն,
Կը զլլան առու, աղբիւր՝ պաղպաջուն,
Ամէ՛ն կողմէն՝ ճայռեր, ծիծաղ, բառաջիւն:

Առուակն այցի՛ կ'երթայ ծաղկանց զոյնզոյն,
Թռչնիկ՝ շիւղեր փանի հիւսել սիրուն բոյն,
Եկէ՛ք մենք ալ վազենք պարտէզ՝ երգերով,
Հո՛ն՝ քնովիւնն կը ներշնչէ սէր, զորով:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵԹՈՏՆԵՐ⁽¹⁾

ԱՐԻՍՏԱԿԷՍ Յ. ՊՈՅԱՃՅԱՆ.

Ուսուցման այս կրկնակի եղանակները դիտմամբ ներկայացուցինք, որպէս զի անով ցոյց տանք թէ խելացի մանկավարժութիւն մը ինչ չափով կը պահանջէ դասաւանդման մէջ անոնց կիռարկումը, բայց որոշ չի նշանակեցինք թէ ո՛րն է այն չափը և միջոցները որով կարելի կ'ըլլայ դիմել անոնց օժանդակութեան: Նոյնպէս լաւ գիտնալու է թէ մենք տիպար դասեր չներկայացուցինք, պահանջելով որ անոնք աւելի ընդարձակուին եւ մանրամասնուին:

Մենք մի միայն փորձեցինք հասկցնել թէ ինքնին եւ աւանց իրենց միացող ստացական միջոցներու, ի՛նչ էին ընծայական եւ մակաժական մեթոճները: Ուզեցինք որ գաղափարային ամէն շփոթութիւն մէկդի ընելով, յաջորդաբար եւ զատ զատ քննենք անոնց տեսակէտներուն տարբերութիւնը:

Բայց իրականութեան մէջ, չմոռնանք յիշեցնել թէ, ուսուցիչը պէտք է անընդհատ քննէ, պրպտէ առանձին՝ փոխանակ իր աշակերտները կրաւորական ունկնդիր մը ընելու, պէտք է միշտ զանոնք գործունէութեան մղէ, օրինակի համար, անոնց ձեռքին տակ դնելով իրագիտութեան պատկանող ամէն տեսակ աւարկայ, վերջապէս աւիթներ փնտռելու է զիրենք միշտ հարցափորձելու:

Նոյն խկ երբ բան մը կը բացատրէ, երբ ընծայական մեթոտով բան մը կ'ապացուցանէ, ուսուցիչը շարունակ հարցումներ ուղղելու է, իր մտածումը ազոց ձգելու է ամբողջացնելու համար, որպէս զի վստահ ըլլայ թէ անոնք ուշադրութեամբ կը հետեին, կամ թէ նոյն խկ անոնց ձգելու է որպէս զի ծանօթ այնպիսի իրողութիւններ եւ սկզբունքներ յիշեն, զորս երբէք մոռնալու չէին:

Բայց ամէնէն աւելի մակաժական և յայտնատեսիկ մեթոտներու մէջ է որ իրեւ հիմնկատուած է սա պարագան թէ, հարցումը փոխանակ տղոցը ուշադրութիւնը հրաւիրող եւ զանոնք ձանձրոյթէ հեռու կեցնող պարզ միջոց մը ըլլալու, ուսուցման ճշմարիտ դրութիւն մը եղած է: Եւ անտարակոյս այդ դրութիւնը, ուր ամէն մէկ պատասխան նշանահար է ճշմարտին խուզարկութեան մէջ նոր քայլ մը նշանակող, հետեւաբար իր լծակից մեթոտներու հետ ունեցած կիռարկումներուն ընդհանրացման եւ սերտօրէն յարակ-

(1) Շարունակութիւն 8 թիւէն

ցութեանը պատճառովն է որ անիկա մանկավարժներու կողմէ մեթոտի կարգ բարձրացած է հարցական կամ Սոկրատեան մեթոտ անուան տակ, որովհետեւ այդ մեթոտն է Սոկրատին ուսուցման եղանակը:

Քսենոփոն՝ որ Աթենացի իմաստասէրին աշակերտն ու կենսագիրն է, օրինակներով մեզի կը ցուցնէ թէ իր վարպետը ինչպէս կ'ուսուցանէր բարոյական ճշմարտութիւնները ապացուցանելու համար, այնպէս որ իր ունկնդիրները ոչ միայն կը ծանօթանային, այլ եւ իրենք ալ կը խոստովանէին, ինչ որ միջոց մըն էր աւելիլաւ թափանցելու:

Արդարեւ, բարոյական կրթութեան մէջ, գոնէ տարրական կըրթութեան մէջ, Սոկրատեան մեթոտին գործածութիւնը ամէնէն աւելի կը պահանջուի: Բայց յարմար ժամուն քերականութեան դասերու եւ մանաւանդ իրագրիտութեան դասերուն մէջ պէտք է դիմել անոր:

Քիչ մը տուաջ ենթակային եւ բային համաձայնութեան կանոնին համար տրուած ապացոյցին մէջ, ահա թէ ինչպէս ի կիրարկանելու է հարցումը մակածական մեթոտով: Ուսուցիչը, փոխանակ օրինակները ինքը ըսելու, աշակերտներուն կ'առաջարկէ որպէս զի իրենք յիշեն քանի մը նախադասութիւններ, ուր ենթակայ եւ բայ գտնուին, եւ յետոյ զանոնք գրել գրատախտակին վրայ: այնուհետեւ կը հարցնէ, առաջին պարբերութեան մէջ ենթական ո՞րն է, — այս ինչ բառը. — ո՞րն է այն բառը, որուն հետ համաձայնած է. — Այս ինչ բառը, — ենթական ի՞նչ դէմքով եւ թուով է. — Բային դէմքն եւ թիւը ի՞նչ է — (ենթակային եւ բային տակ համառօտագրութեամբ նշանակել կուտայ անոնց դէմքը եւ թիւը) — Յետոյ երկրորդ, երրորդ պարբերութեան կ'անցնի, այդպէս շարունակաբար, միշտ մի եւ նոյն եղանակը ի գործ դնելով, Յետոյ աշակերտներուն կ'ըսէ. ամէն մէկ պարբերութիւն զատ զատ դիտեցէք, իրենց տակ նշանակուած դէմքի եւ թիւի համաձայնութիւններովը. — թէպէտ եւ այս կերպ գրուածը կը կարծէք բան մը չը թելադրեր. սակայն տղաք ամէնքն ալ պիտի նշարեն թէ, իւրաքանչիւր պարբերութեան մէջ, ենթական եւ բայը միեւնոյն դէմքը եւ միեւնոյն թիւը ունին: Այնուհետեւ շատ դիւրին պիտի ըլլայ համաձայնութեան կանոնը դուրս հանել, ուր կ'ուզէր առաջնորդել զիրենք: Այն ատեն աշակերտներուն իրենց կազմել պիտի տայ տարազը (formule) գրատախտակին վրայ գրել տալով:

Գալով Արքիմիտէսի սկզբունքին, — հարցումները եւ պատասխանները այնպիսի ընտանի երեւոյթներու վրայ ըլլալու են որ,

տղաք իրենք կարենան դիտել եւ այդ դիտողութիւնները իբրեւ մեկնակէտ ծառայեն մակաձական մեթոտով աւանդուելիք դասին (ինչպէս ջուրի եւ ծովու բաղնիքին մէջ մեր անդամները աւելի թեթեւ կ'զգանք թէ հորէն քաշուած դոյլ մը աւելի թեթեւ կը թուի որքան ատեն որ ջուրին մէջ է եւ աւելի ծանր կը թուի ինչ չափով որ ջուրին երեսէն վեր բարձրացնենք)։ Այս կերպով տղոց հետեւցնել կուտայ մտածումնին հրաւիրելով, թէ հեղուկի մը մէջ մխուած ամէն մարմին կը կորսնցնէ իր կշիռին մէկ մասը։ Եւ երբ գործիքով ցոյց տալ հարկ ըլլայ, պիտի ըսէ. — Ի՞նչ է աս. — կշռորդ մը. — Ասիկա՞, — Երկու գլան»։ մէկը միւսին մէջ կ'անցընէ եւ կը հարցնէ, « Երկուքն ալ միեւնոյն կերպով շինուած են»։ Այսպէսով տղաք կարող կ'ըլլան պատասխանելու թէ մէկուն մէջը պարապ է, եւ միւսինը լեցուն, թէ եւ երկուքին ծաւալներն ալ հաւասար են իրարու։ Յետոյ, փորձի ամէն մէկ մանրամասնութեան, անոնց դիտողութիւնը հրաւիրելու է ըսելով. « Ի՞նչ ըրինք, հիմա ի՞նչ եղաւ։ » Եւ այսպէս շարունակաբար մինչեւ որ փնտռուած սկզբունքին վերջնական կէտին հասնին։ (Միշտ աշակերտներուն իրենց գտնել տալու է փնտռուած սկզբունքը կամ վերջնական կանոնը)։

(Շարունակելի)

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

ԱՆԴՈՒՆԴԻՆ ՄԷՋ

Տեղակալը՝ պողպատէ գունտին առջեւ կեցած, փայտի կտոր մը կը ծածմէր։

— Դո՞ւք ինչ կ'ըսէք ասոր Սթիվէնս, հարցուց։

— Այս ալ գաղափար մըն է, պատասխանեց Սթիվէնս՝ անկեղծ երեւնալու ջանքով մը։

— Կարծեմ պիտի խորտակուի, տափակնայ, շարունակեց տեղակալը։

— Անշուշտ խնամով կատարած է իր հաշիւները։

— Բայց կրելիք ճնշումին վրայ մտածէ անգամ մը. ջուրին երեսը՝ մէկ քառակուսի բթաշափի վրայ 14 լիպրա ճնշում կ'ըլլայ, երեսուն ոտք խորութեան մէջ այդ ճնշումը կրկին է, վաթսուն ոտքի համար՝ եռապատիկ... այսինքն մէկ մղոն խորութեան մէջ 140 անգամ 14 լիպրա... կը հասկնա՞ս Սթիվէնս, մէկ մղոն

Ջուրին տակը՝ ամէն մէկ քառակուսի բթաչափի վրայ մէկ ու կէս թօնօ ճնշում կայ, Հոս, գտնուած տեղերնիս, սվկէանոսը առ նուազն 5 մըսն խորութիւն ունի, յատակին վրայ կրելիք ճնշումն ալ պիտի ըլլայ 7 ու կէս թօնօյէն աւելի...:

— Աղուոր հաշիւ, ըսաւ Սթիվէնս, բայց պողպատին թանձրութիւնն ալ քիչ բան չէ:

Տեղակալը չպատասխանեց և սկսաւ ձեռքի փայտը ծամծմել: Խօսակցութեան առարկան պողպատէ ահագին դուռնա մըն էր, գրեթէ ինը ոտք տրամագծով, որ նաւուն յետնակողմը լաստակներու վրայ կը հանգչէր: Գուռնտին երեսին վրայ, մին միւսին տակը բացուած էին երկու պատուհաններ, զորս կը ծածկէին խիտ թանձր ապակիէ ոսպնակներ, նոյն առտուն իսկ երկու խօսակիցները դիտած էին անոր ներսի կողմը. չորս դին զսպանակաւոր բարձիկներով ծածկուած էր, բոլոր առարկաները պտտակաւոր կոճակներով գունտին ներքին երեսին վրայ հաստատուած էին, նոյն իսկ Մէյէքսի գործիքը՝ որ գունտին մէջ փակւողին արտաշնչած ածխական կազը ծծելու և անոր տեղը թրթռածին արտադրելու պաշտօնը ունի:

— Կը մտածեմ որ, չարունակեց տեղակալը, եթէ այս ապակիները կոտրին — եւ պիտի կոտրին ալ — ջուրը երկաթէ հոսանքի մը պէս ներս պիտի խուծէ, կոկորդին, թռքերուն, ալկանջին մէջ պիտի թափանցէ... և ան, պարզապէս պիտի ճըզմուի ու տափակնայ...:

— Հապա գո՞ւնտը, հարցուց Սթիվէնս:

— Քանի մը պղպջակներ դուրս պիտի արձակէ և կամոց մը տեղաւորուի յատակին ցիւխերուն մէջ... Խեղճ էլսթէտ ալ բարձիկներուն փակած պիտի մնայ՝ ինչպէս կարագը հացին վրայ:

— Անգամ մը ետիդ չե՞ս նայիր, ըսաւ ձայն մը:

Եւ էլսթէտ երեւցաւ, ճերմակ ֆուգիւմ մը հագած, սիկնուր բերանը եւ ժպիտ մը շրթներուն վրայ:

— Ի՞նչ կ'ըսէիք հացին ու կարագին վրայ, չարունակեց էլսթէտ, նորէն ծովային սպաներու թռչակին քիչութեան վրայ կը դանգատէիք, Ուէյպրի՛ճ:

— Վստա՞հ էք որ զսպանակաւոր շարժումը կանոնաւորաբար պիտի գործէ, հարցուց Ուէյպրիճ խօսակցութիւնը փոխելով:

— Երեսունըֆինգ անգամ փորձեցինք, ըսաւ էլսթէտ, եւ միշտ կանոնաւոր կերպով բանեցաւ:

— Բայց եթէ կանգ առնէ, չբանի:

— Ինչո՞ւ համար:

— Գոյան հազար ոսկի ալ տալու ըլլան, նորէն այդ անիծեալ գունտին մէջ չեմ մտներ :

— Շիտակը, աղէկ կը սրտապնդէք կոր զիս, դիտեց էլսթէտ :

— Տակաւին չկրցայ հասկնալ թէ ձեր մեքենան ի՞նչպէս պիտի գործէ. հարցուց Սթիվէնս :

— Ամէնէն առաջ գունտին մէջ պիտի մտնեմ եւ վրայէս լաւ մը պիտի գամեն պատուհանները, ըսաւ էլսթէտ : Երբ երեք անգամ ելեքտրական լոյսը վառեմ ու մարեմ ցուցնելու համար թէ ամէն բան պատրաստ է, այն ատեն գունտը լատակներուն վրայէն ծովը պիտի նետեն՝ տակէն կախուած կապարներու խոշոր կտորներովը : Գունտին վրայ ճախարակ մը կայ որու վրայ փաթտուած է 100 գրկաչափ երկայնութեամբ ամուր չուան մը. այս չուանին ծայրէն է որ կախուած են կապարէ բոլոր ծանրութիւնները : Կը տեսնէք որ կապարներուն մէջտեղը ծակ է եւ անկէ անցած է երկաթի ձողիկ մը, այս ձողիկը կապուած է զսպանակի մը որ վրան չուան փաթտուած ճախարակը կը դարձնէ, — երբ կապարէ ծանրութիւնները ծովին յատակին դպին, երկաթէ ձողիկը շարժման մէջ պիտի դնէ զսպանակը եւ չուանը պիտի փաթտուի ճախարակին վրայ . . . : Հիմա ուշադրութիւն ըրէք. ամբողջ գործիքը ջուրը կ'իջեցնեն. գունտը օդով լեցուած ըլլալուն ջուրէն թեթեւ է եւ ծովուն երեսը կը ձփայ, մինչդեռ կապարէ ծանրութիւնները ջուրին մէջ կը մխրձին միեւնոյն ժամանակ քակելով ճախարակին վրայ փաթթուած չուանը. երբ չուանին ծայրը կուգայ, պողպատէ գունտն ալ ծանրութենէն քաշուելով կ'ընկղմի ջուրին մէջ :

— Բայց այդ երկայն չուանին ի՞նչ պէտք կայ, հարցուց Սթիվէնս, ինչո՞ւ համար կապարէ ծանրութիւնները ուղղակի գունտին վրայ չէք կապեր :

— Որովհետեւ ծանրութիւններն ու գունտը միասին՝ ջուրին մէջը ընկղմելով՝ շատ չանցած ահագին արագութիւն մը պիտի ստանան եւ երբ յատակին հասնին՝ գետինն զարնուելով պիտի խորտակուին. բայց իմ դրութեամբս, երբ կապարները ամէնէն առաջ յատակը հասնին ու նստին, գունտը շատ պիտի թեթեւայ եւ բնաւ գետինին չպիտի զարնուի, հապա վեր բարձրանալ պիտի սկսի. հոս է որ զսպանակին շարժումը անհրաժեշտ է, որովհետեւ կապարներուն մէջէն անցած ձողիկը գետին դպչելուն պէս ճախարակը՝ զսպանակին շարժումին տակ՝ դառնալ պիտի սկսի եւ չուանն ալ վրան փաթթուի, ասանկով գունտը կամաց կամաց յատակին պիտի մօտենայ եւ վերջապէս թեթեւ մը նստի. այն ատեն ելեքտրական լապտերս կը վառեմ եւ հանգիստ մը չորս

կողմն անցածը կը գննեմ: Զսպանակը կէս ժամի չափ բանելէ ետ-
քը շարժման մէջ պիտի դնէ դանակ մը որ կապարէ ծանրութիւն-
ներուն կապուած չուանը կտրելով, գունտը պիտի թեթեւնայ և
ծովուն երեսը բարձրանայ:



Գունտին բոլորտիքը ծովը փրփր'ցաւ ... (Երես 258)

— Հապա եթէ նաւ մը գտնուի գունտին վեր ելած տեղը,
հարցուց Ուէյպրիճ:

— Գնտակի մը պէս պիտի ծակէ զայն, ըսաւ Էլսթէտ:

— Ենթադրեցէք որ պզտիկ խեցի մը բոյն հաստատէ զսպանակին մէջ . . . :

— Լեռնիկ պարզ հրաւէր մը եղած պիտի ըլլար իրենց ընկերութեան մէջ մնալու համար . պատասխանեց էլսթէտ, կռնակը ծովին դարձուցած՝ պողպատէ գունտը դիտելով :

* * *

Կէս օրէն մէկ ժամ առաջ էլսթէտը ծովը ձգած էին . Հանդարտ ու պայծառ օր մըն էր . ելեքտրական լապտերը երեք անգամ վառուած էր, ուստի գունտը մինչեւ ծովուն երեսը իջեցուցին : Նաւակամուրջին վրայ այնքան ահագին տեսնուած գործիքը՝ հիմա պզտիկ բան մը կ'երեւար :

— Պատրաստ էք, հարցուց հրամանատարը :

— Լէյոն, հրամանատար :

— Թո՛ղ տուէք ուրեմն :


Պողպատի գունտը կապող չուանը կտրեցաւ : Գունտին բոլորտիքը ծովը փրփրեցաւ : Նաւուն մէջէն մէկը թաշկինակը երերցուց . ուրիշ մը՝ քանի մը հուրաններ պօռալ փորձեց : Յանկարծ գունտը՝ որ ալիքներուն վրայ կը տատանէր՝ ձիգ կեցաւ ու սկսաւ պզտիկնալ . օգի պղպշակներ ձեւացան եզերքներուն վրայ եւ ալ ընթարթի մը մէջ անհետացաւ ջուրերուն տակ : Բիշ մը ատեն ճերմակ լոյս մը դեռ կը մատնանէր անոր անցած ճամբան . յետոյ ալ մէն բան իր սովորական վիճակը ստացաւ :

Պտուտակը դառնալ սկսաւ եւ շոգենաւը գտնուած տեղէն քանի մը մղոն անդին գնաց՝ գունտին վերադարձին պահուն անոր ճամբուն վրայ չգտնուելու համար :

(Շարունակելի)


Թարգմ .

Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԱՍՏԱՐԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՄԷՋ



Հռոմեական կրթութիւն. — Հռոմայեցիին՝ իր սահմանակից դրացիէն՝ Յոյնէն տարբերեցաւ սա կէտին մէջ որ ինք դաստիարակութիւնը յաւէտ գործնական ճամբու մը մէջ ձգեց, մինչ առջինը բանավարութեան մշակ մըն էր : Կար ատեն մը որ միայն Ապարտական հոգիով լեցուած, քաջ մեքրդեր պատրաստուելու կ'աշխտ-

տէր, և երբ այս ձգտումին շնորհիւ անպարտելի լէգէոններու տիրացաւ, ինքզինքը տուաւ իմացական զարգացումի որ երկրորդ շրջանը կը կազմէ: Այս միջոցին թէեւ տիեզերահռչակ դաստիարակներ չունեցաւ, սակայն մտքի ընդհանուր զարգացումը շատ զգալի էր: Թէեւ կրօնական բոյրով բուրումնաւէտուած: Քրիստոսէ առաջ երրորդ դարուն, Հռոմի մէջ կանոնաւոր դպրոցներու բացումը կ'սկսի, անկէ առաջ ծնողք էին իրենց զաւակներու ուսուցիչները: Որքան որ այս ժամանակէն վերջ կրթութիւնը կրօնական և իմացական հանգամանք մը կ'առնու, դարձեալ նախնի զինուորական ոգին մարած չէր: Ահա այս տարբեր ձգտումներ ունեցող ոգիներ միանալով հռոմէական բազմալի քաղաքացիութիւնը կը կազմէին: Մանուկին դժաւումներն էին Campus Martiusի⁽¹⁾ վրայ մարմնական բազմադան խաղեր ու մարզանքներ, salian⁽²⁾ երգերու վարժութիւններ, եւ Տասներկու Տախտակներու ուսումը: Կրթութեան մանուկին միջավայրը կը յատկանշէին ընտանեկան հաստատուն վարչութիւնը, անոր մէջ մօրը գերազանց և խիստ բարձր դիրքը ու բազմաթիւ աստուածութիւնները: Մանուկը այս ազդակներու ազդեցութիւններէն չէր կրնար ձուլոյթիլ, Բարօք ընտանիքի հսկողութիւններէն դուրս, կը խորհուէր թէ աստուածուհի մը՝ կաթէն կտրած մանկան ուտել կը սորվեցնէր և ուրիշ մը խմել, քիչ վերջ շորս աստուածուհիներ կ'առաջնորդէին անոր ձեռքերէն բռնած որ տոտիկ տոտիկ քալէ: Պատանիները իրենց հասարակ ընթերցանութեան հետ ստիպեալ էին երկրին քաղաքական օրէնքը ուսանիլ, թէեւ իրենց մտքի մակարդակէն բարձր ալ դար, սակայն դարձեալ կը ճալտկային ընտանեան առնոց, երբ յառաջացումը հետզհետէ թափ առաւ, գրականութեան, գեղարուեստի և ճարտարախօսութեան դասաբաններ բացուեցան, որոնց աշակետներէն մի քանիին մանկավարժական հատկոտոր դիտողութիւնները ներկայելով բաւականանանք: Գուինթիլեոն (Ն. Ք. Ա. Դր.) կ'ըսէ «Երբ զաւակ մը ունենաս սուսնին անգամ՝ մեծամեծ յոյսեր մի տածեր անոր նկատմամբ: Ապագայ երեւակայութիւններով արբշիւ, ներկայի պարտաւորութիւններդ մի՛ մոռնար և զաւակդ յոռի ազդեցութիւններու տակ ձգեր: Ներկուած բուրդը ո՛րքան ալ լուսաւ, իր նախնիներմկութիւնը չի գտնիր»: Ուրիշ տեղ մը խօսքը ուսուցիչներ-

(1) Սա՝ Հռոմի պարիսպներէն դուրս հրապարակ մ'էր, ուր կանգնած էր Արես, պատերազմի չաստուածին տաճարը:

(2) Սիկիլիոյ Սօլէս քաղաքին անունովը կոչուած երգեր ու խաղեր որոնք իրենց զրական ու քերականական օրէնքներու հակառակ ազաւաղումներովը ուշագրաւ էին:

բոլոր ուղղելով կը սահմանէ թէ «Ուսուցչին առաջին գործն է ամենայն ճշդութեամբ աշակերտին նկարագիրը և միտքը ԲՈՒՆԵՐ»։ Ինչ գեղեցիկ վճիռ հանդէպ դաստիարակին։ Անգամ մը Կեսար՝ ներկայ գտնուելով դասախօսութեան մը, պատանիի մը եղանակաւոր ընթերցանութեան համար ըսաւ, «Երբ կ'երգես», գէշ կ'երգես, եւր կը կարդաս՝ ինչո՞ւ կ'երգես»։ Կեսար բուն իսկ սերնդեան ազնուացումին նախանձաւոր, ամէն միջոցներ և դիւրութիւններ կ'ստեղծէր։ Ուսման դրականութեան համար Սենեկա կ'ըսէ՝ «Պարտինք սորվիլ ոչ թէ դպրոցին սիրուն՝ այլ կեանքի նպատակներուն համար»։ Բարոյական դաստիարակութեան վրայ խօսած առեն կը շեշտէ թէ նպատակը աւելի շուտ կ'իրականանայ օրինակով քան խրատով։ Պլուտարքոս (Յ. Տ. 50-138) և շատ խորհրդալից եղանակով կը գրէ մանկավարժութեան նկատմամբ. «Հոգին՝ լեցնելիք աման մը չէ, հապա յաւէտ վառարան մըն է զոր բոցավառել հարկ է»։ «Միտքը ամանի մը նման լեցուիլ չուզեր, այլ՝ յարմար վառեւանիւթեր, որպէս զի ճամարտութեան հրատապ սէրը և գիտութեան փափաքը հրահրին»։ Խօսքը դարձնելով աշակերտին, կ'ըսէ. «Այն ուսանողները՝ որոնք առանց ներքին-գործունէութեան եւ հրահրումի ուսուցչին առջեւ կ'երթան, կը նմանին այն կնոջ որ դրացիին տունէն կըսկ առնելու երթալով՝ կը նստի անոր օջախին առջեւ ու կը տաքնայ, բոլորովին մոռցած իր տունը»։ Սա հիւմբիսք բացատրութիւնը ինչ գեղեցիկ կը պարզէ անփոյթ աշակերտներու վիճակը։ Քիչ վերջ կուգանք Մարկոս Աւրելիոսի չըմանին՝ որուն նշանաբանն էր «Ուղղ միտք, առողջ մարմնի մէջ»։ «Որակով շատ եւ չէ՝ թէ քանակով»։ Իցի՛ւ թէ մեր բոլոր դըպրոցներուն ճակատը գրուէին սոյն տասնեւհինգ դարերու սկզբունքները։ Ամփոփելով սոյն տեսութիւնները, կը գտնենք թէ Հռոմ արդի գիտական ուսման թացքին քիչ ծառայութիւն մատուցած չէ իր բարոյա-դրական ձգտումներովը. թէ և հարկ է խոստովանիլ միանգամայն թէ մասնաւոր խուզարկումի ու մասնագիտութեան բացակայութիւնը որոշ և զգուշ գիւտ մը չստեղծեց։ Հռոմի դպրոցին ներշնչումը գրական, բարոյական եւ խոհական (prudential) էր։ Գիտութեան (since) դրամարժէք մտածումը արթնցած չէր։

* * *

ՄԻՋԻՆ ԴԱՐ. — Քրիստոնէութեան տարածումէն վերջ չուրջ 16 դարեր, մարդկութեան մէկ մասը և կամ ներկայ քաղաքակրթութեան վարիչներու պսակը՝ իրենց սկզբունքները, իրենց դպրոցները, իրենց վանքերը, իրենց հեղինակութիւնները ունե-

ցան, որոնց վրայ կ'արժէ ակնարկ մը ձգել, Միջին Դարը՝ մտքի գերութեան շրջանն էր: Կամահաճ հեղինակութիւններ՝ մենաշնորհ ըրած էին մտքի աշխարհը: Ինքնամտածումը՝ ոճիւր և հարցասիրութիւնը անհաւատութիւն էր: Տգիտութիւնը՝ Երկինք առաջնորդող պողոտան էր: Օգոստինոս կ'ըսէ. «Գիտութիւնն է որ Երկինքը կը շահի»: Ուսանողին համար չքեղ դասաւանդը, հանգստուէտ աթոռը եւ սեղանը՝ հպարտացնող ազդակներ կը համարուէին. որուն համար 1363ին բացարձակապէս արգիլուեցաւ այստեսակ դասական առարկաներու գործածումը: Կրթելու միակ միջոցը՝ գաւազանն ու իրեն յարակից գործիքներն էին: Օր մը աբբային մէկը՝ Անսէլմի ներկայանալով ըսաւ. «Մեզ յանձնուած աշակերտները գիշեր ցորեկ պատժելէ չենք դադարի. սակայն անոնք ալ աւելի կը չարանան»: Անսէլմ պատասխանեց «Չէք դադարի պատժելէ՝ ուրեմն ինչ պիտի ըլլան երբ մեծնան, եթէ ոչ տխմար մարդեր. ընտի՛ր դաստիարակութիւն որ մարդերէ կենդանիներ կը շին»: Թէեւ այս տեսակ դիտողութիւններ եղած են ասեն ասեն, բայց փոփոխիչ ազդեցութիւն մը ձգած չեն: Խըստութիւնը, դպրոցավարին գէմքին դաժանութիւնը, կեանքի վայելքներուն արհամարհումն ու զրկումը՝ համեմատական էին դպրոցի մը համբաւին և մեծութեան. Իմացական մշակումը՝ սոսկ կրօնական մտածումներու միջնորդութիւն մէջ էր: Կրթութիւնը՝ յաւէտ անդրչիրիմեան կեանքին համար էր և չէ թէ ներկային: Եկեղեցին՝ դպրոց էր և դպրոցը եկեղեցի. այս նոյնութիւնը և կամ դուն ըսէ միութիւնը կը վտարէր դուրս ինչ որ գիտութիւն էր: Բնութեան ծոցը մխրճելով բնութեւոյթները ուսումնասիրելու պակասը, հոգիի եւ զգացումի խտութեամբ կը լեցուէր: Սա ճշմարիտ է թէ բնութեան ծոցը և իր օրէնքներովը աւանդուած դաստատութիւնը՝ զուարթարարոյ կընէ նկարագիրը Եկեղեցականի և աշխարհականի միջեւ պայքար մը գոյացաւ թէ որով կը վերաբերի կրթական խնդիրը. պայքար մը որուն յաղթողը առաջինը եղաւ. և թէեւ բարեկարգութիւնն ու 88ի Ֆրանսական կառավարութեան միջեւ կարգադրութիւն մը աստիճանաբար առին եկեղեցիի ձեռքէն այն իրաւունքը, սակայն դեռ խնդիրը իր վերջնական լուծումը գտած չէ: Սուրբ Գրոց տառական նշանակութեան տրուած գերազանց կարեւորութիւնը՝ դրական հանգամանք մը տուաւ ուսանողներուն: Վարդապետական մեկնաբանութիւններու անձանձրոյթ յետապնդումը՝ վերացական ու ձեւակաւ տրամաբանութեան ուսումին թափ տուաւ: Յիշողութեան բեթակը լեցուած պաշարին քանակը՝ ուղղակի կը համեմատէր ուսումնականութեան աստիճանին: Քրիստոնէական հաւասարութեան սկզբ

բունքին մշակումը՝ իր դարաւոր գիտութենէն՝ տեսակէտով մը՝ ալատագրեց կնոջ իմացականութիւնը, Սքոլաստիկ դպրոցը յաջողեցաւ տիրել կրթական աշխարհին վրայ, Մտքին մակաբերական induction) տրամաբանութեան կարողութիւնը շատ զարգացաւ, այսինքն մասնաւոր երեւոյթներէ, տեղիքներէ և ապացոյցներէ ընդհանուր եզրակացութիւններ հանել: Ահա ասոնք են Միջին Դարը կրթական տեսակէտով յատկանշող կէտերը:

Մ. Ս. ՈՐԲԵՐԵԱՆ

ԾԱՆՈԹԱՆԵՐՈՒ

ԼԵԶՈՒՆ

Ա.

Արջամագիլ (Acanthe). — Գեղարուեստի սեր
Տունկ մը՝ որ չլթնածեւ ծաղիկներ ունի: Ժողովրդական լեզուով անփութ արջամագիլ կոչուած ասոր մէկ ծանօթ տեսակը՝ նշանաւոր է իր կտրատուած գեղեցիկ տերեւներովը՝ որոնց ծայրը բընականօրէն ծռած է: Արջամագիլին գեղեցիկ տերեւները իբր օրինակ ծառայած են կորընթական սիւնագլուխներու զարդարումին. ասոր համար անիկա կը խորհրդանշէ գեղարուեստներու սէր: Արջամագիլին արմատները և տերեւները կրնան գործածուիլ բժշկութեան մէջ:

Արծաթ-ծաղիկ(*) (Argentine). — Միսսուսիս
Շահոքրամ՝ անտառներու վարդազգիներու ընտանիքէն է. իր տերեւները հազուադէպ և փոքր են. իր ծաղիկը կ'արտարուէ քաղցր եւ անուշ հոտ մը: Տերեւներուն տակի կողմը՝ ճերմակ և արծաթագոյն փայլ մը ունի. այս վերջին յատկութենէն առնուած է իր անունը:

Արրաիկալ (Arrête-bœuf. Գաւառ օրու). — Խոջընդոս
Պարկճաւորներու սեռէն բոյս մը որուն ծաւալուն և կարծր արմատները արգելք մը կ'ըլլան արօրներուն և եզներու ոտքին. ասկէ իր անունը: Ցօղունը փշոտ կ'ըլլայ, և այն փոքրիկ ճիւղը՝

(*) Աստղանիշ * կրող բառերն իմ շինածս են. իսկ խաչանիշ † կրող բառերը Տէմիրճիպաշեանին շինածներն են:

որու վրայ կը ժողովուին ծաղիկները, վերջացած է դեղնորակ, կարծր եւ ասեղի մը պէս բարակ ծայրով մը: Ընտանի խոտակեր կենդանիներուն համար շատ ախորժելի է արօրակալին տերեւները: Իսկ արմատները ձիերուն կուտան մասնաւորաբար:

Արփայխնձոր (Ananas). — Կասարեյուքիւն
Հնդկաստանի եւ տաք երկիրներու յատուկ միաբլթակ բոյս մը՝ զոր



Եւրոպա տաք ջերմանոցներու մէջ կը մշակեն: Ունի փշապատ, բլրաձեւ պտուղ մը որ շատ յարգի է իր համին համար:

Այգազուարն (Belle de jour). — Պշրանի

Երկնագոյն ծաղիկ մը՝ պատուտակի (liseron, պօրու չիչէյի) տեսակէն՝ որ միայն ցերեկին կը բացուի: Այս ծաղիկը խիստ շնորհալի եւ բանաստեղծական է: Անիկա բարեկամն է սենեակին՝ որուն պատուհանը կը շրջապատէ եւ կը դուարթացնէ: Կը թուի թէ ան կ'ըսէ թիթեռնիկին. « Ես գելեցիկ եմ, իմ խոնաւ ու զով բաժակս գեփիւռին եւ արեւին համբոյրները կը կանչէ...: Անապարհ գիս սիրել, որովհետեւ իմ քաղաւորութեանս միջոցը կարն է »: Ամէն իրիկուն անիկա կը գոցէ իր յոգնած թերթերը, եւ կը քը-

նանայ, հեշտօրօր՝ գիշերուան երազներէն, թերեւս տակաւին յուզուած՝ ցերեկի յիշատակներէն:

Հատիներէն կը կոչուի *convulvulus*, *convolvere*էն՝ որ կը նշանակէ փաթտուիլ, որովհետեւ ասոր բոլոր տեսակները մագըցող են, և կը փաթտուին վանդակներու, յենարաններու կամ իրենց մօտը բոյսերուն վրայ:

Աֆլոր քօուկ (*Crête de coq*) . — Վասքարուքիւն
Բոյս մը որ շատ կը գտնուի մարգերուն մէջ. ծաղիկը սաղաւարտաձեւ է եւ հատիկները եզերուած են լայն պատուտակով մը: Ըսոր համար կ'ըսեն թէ իր մօտերը աճող բոյսերը եւ ծառերը կ'այրէ: Այս աւերիչ ազդեցութեան համար է որ վատթարութեան խորհրդանշանն եղած է:

Անձիւնս (*Fumeterre*) . — Վիշ, դառնութիւն, ասեղութիւն
Խաշխաշագգիներու ցեղէն հասարակ եւ ծանօթ բոյս մը որ բաւական մեծ քանակութեամբ կը գտնուի դաշտերը. մշակութեան համար փնտասկար է: Իր բոլոր մասերն ալ լեզի են, եւ բժշկութեան մէջ կը գործածուին իբր արիւն մաքրող և կորովիչ գեղ:

Արիպասպի (*Héliotrope*. կիւն չիչեյի) . — Յաւիտենական սէր
Գաղտնիկութեան ցեղէն սիրուն թուփ մը՝ որ աւելի իր քաղցր բոյրովը նշանաւոր է՝ քան իր ծաղիկներուն գեղեցկութիւնովը: Պարտէզներու մէջ մշակուածը կը բանայ փոքր, կապտագոյն ծաղիկներ, եւ կ'որ ու թաւ ճիւղերը կը կրեն սիրուն, ճուաձեւ տերեւներ՝ նկարատիպ: Թաւ և մուր կանաչ: Ասոր հոտաւէտ ծաղիկներէն կը պատրաստեն ջուր մը՝ զոր կիները կը գործածեն: Կ'ըսուի թէ այս ծաղիկը գտած է Մ. Ժօզէֆ տը Ժիլլօն:

« Դիցաբանութիւնը՝ մեզի կը սորվեցնէ որ Տլիթա վշտալից՝ տեսնելով զինքը սիրող Ապօլօնին՝ Լէօքօրհէան նախապատուելը, անօթութենէ մեռցուց ինքզինքը, և աստուած զանի արիպասպիի փոխեց »:

Անմեռուկ (*Immortelle*. Գաշիֆե չիչեյի) . — Յաւիտենութիւն
Անմեռուկը եւ իր զանազան տեսակները կը փնտուին իբր զարդ ջերմանոցներու եւ պարտէզներու: Ասոր քանի մը տեսակներուն ճուրէրը պսակներուն բացուելէն քիչ առաջ քաղուելով կը չորցրուին և կրնան արուեստական ծաղիկներու տեղը բռնել՝ զարձեայ բնական թարմ գեղեցկութեան պատրանքը տալով:


« Սէրը այս ծաղիկն է այնքա՛ն գեղեցիկ՝
Որուն կոկոնները Զեփիւռը կը բանայ:
Բարեկամութիւնն ալ անմեռուկ է,
Զոր ամէն եղանակի մէջ կը քաղեն »:

ՏԻԻՄԱ

Անանուխ (Menthe). — Առափնուքիւն, իմաստութիւն
Պէքնարտէն տը Սէն Բիէն կը պնդէ թէ՛ բնութիւնը խոնաւ տե-
ղեր կը բուսցնէ անանուխը՝ հոնտեղի մթնոլորտին գոլորշիները
մաքրելու համար: Բսան տեսակի չափ անանուխներ կան:


ԳԼԱԿ ՀԻՆԵՆՑ

Հանրագիտակի ճրդ Թիւին մէջ հրատարակուած երկրաչափական գլուխ
նախնական լուծումը:



ճրդ Թիւին թուարանական խնդիրը լուծեցին երզնկայէն՝ պարոնայք Փի-
լիպպոս Զօրեան, Կարապետ Արղումանեան եւ Պարզմէն:

ճրդ Թիւին առեղծուածային կենդանիին լուծումը:



ճրդ Թիւին 8 լացող եւ 8 խնդացող տղոց եւ Հովուհիին երկու նկարհա-
նելուկները միասին լուծեցին՝

Օր. Մարքուհի Ղազարոսեան եւ Պ. Սարգիս Ղազարոսեան՝ Նիկոմիդիա. —
Պարոնայք Ստեփան Խտրեան, Մատթէոս Դանիէլեան եւ Գէորգ Եաղմեան՝ ա-
շակերտք Քէօթահեայի ազգ. վարժարանին. — Պ. Արշակ Կ. Սէֆէրեան՝ Բերաւ —

Պարոնայր Արտաշէս Տ. Մատթէոսեան, Յարութիւն Ս. Օհանեան՝ Քէօթահեա. — Պարոնայր Գէորգ Գուլեան, Գրիգոր Յ. Գալուստեան, Հրանտ Սամուէլեան, Միհրան Կիւրճեան, Յովհաննէս Նիկողոսեան, Վահան Աւետիկեան, Նշան Աթէշեան, Յակոբ Կէօհէրեան՝ աշակերտք Իբրանոսեան վարժարանին Ամասիա. — Պ. Ա. սատուր Արսէնեան՝ Թէքիրտաղ:

Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Յ Ի Ն Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

1. — Ինչո՞ւ համար հաւերը պզտիկ փառի կտորներ կը կլլեն .
2. — Հովիւ մը իր ոչխարները ծախելու համար վաճառականի մը հետ սապէս համաձայնեցաւ . առաջին ոչխարը 1 փարա . 2րդը՝ 2 փարա , 3րդը՝ 4 փարա , 4րդը՝ 8 փարա . 5րդը՝ 16 փարա , եւ այսպէս շարունակաբար միշտ կրկնելով մինչեւ 50 ոչխար : Հովիւին եւ վաճառականին ո՞րը աւելի լաւ քուսաբանութիւն գիտէ եղեր :
3. — Կ'սպրի՝ մարմին չունի . կը խօսի՝ լեզու չունի , մարդու չեղեաւ , բայց ամենքս ալ կը լսենք :
4. — 'Ի՜տե՛՛ք հետեւեալ առաջարկուած չորս հարցումներուն պատասխանները , զորոնք հակառակ կողմէն ալ կարգաւով՝ կրկին նոյն իմաստը կուտան :

1. Ածական մը որ ոչ-ի կ'արժէ :
2. Առնական հագուստներուն եւ կարեւոր մասերէն մին :
3. Բառ մը որ միշտ խնդուք եւ փահափա կը պատճառէ :
4. Կտաւագործութեան մէջ մեծ դեր կատարող գործիք մը :

ՀԱՅՐԱՊԵՏ

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Զ Ե Կ Ո Յ Ց

Մեր Մեծ. Գործակալներէ եւ Բաժանորդներէ կը խնդրենք որ եթէ ներկայ տարւոյ առաջին թիւէն աւելորդ ունին՝ բարեհաճին մեզ վերադարձնել :

Այն բաժանորդներն , որոնք ուղղակի զատ նամակով Հանրագիտակ ուղած են և մինչեւ ցարդ չեն վճարած բաժնեգինը , բարեհաճին վճարել կամ նամակադրով եւ կամ Մանտա քօսթով , հակառակ պարագային՝ թերթին առաջումը պիտի դադրի :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան , Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում , գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

Ն Շ Ա Ն Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին :

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՏՊԱԳԻԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԷՆԵԱՆ

Ն.ՇԱՆ.Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38 , Իգտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆԵՆԷ

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վանառականացի 12 քեսըր գաւ առնել ուզողը պէտք է վճարէ 12 դրուշ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր

Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան

Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան

Գօմեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլկէրեան

Եւթոկիա, Խաչիկ էֆ. Դ. Թաշճեան

Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման

Զմիռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան

Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան

Էրպա'ու, Կարապետ էֆ. Գօճաեան

Թեփրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան

Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Կեօաւիա, Երուանդ էֆ. Երկաթեան

Կիւրիւն, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր

Հալեպ, Ս. էֆ. Ամատեան

Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան

Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս ԲՆ. Շաչինեան

Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Աղարեան

Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան

Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան

Արվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան

Սիւմհանի քոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Վեզիր քոքըիւ » » »

Տիարպե'իւր, Լեօն էֆ. Սրապեան

Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Բանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրն է կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս շրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակապրոշմ դնել նամակին մէջ եւ նամակն ալ աստիճանագրել (բահիւս ընել), նամակապրոշմ կրող նամակները աստիճանագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբեք պատասխանատու չենք: